# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ ՍՈՎԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Հունիսի 21-ին մարզսովետի գործկոմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի XX գումարման սովետի արտահերթ նստաշրջանը:

Նստաշրջանը քննարկեց «Մարզում ստեղծված իրադրության և նրա կայունացման միջոցառումների մասին» հարցը:

Ինֆորմացիայով հանդես եկավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների սովետի գործկոմի նախագահի պաշտոնակատար Շ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝ Մարտունու շրջանի «Կոմունիզմ» կոլտնտեսության գլխավոր զոոտեխնիկ, դեպուտատ Գ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆԸ, Ստեփանակերտի № 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, դեպուտատ Լ. Ի. ՍԱՐԳՍՅԱՆԸ, մարզային դատարանի նախագահ, դեպուտատ Ն. Մ. ԴԱԴԱՅԱՆԸ, Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատի բանվոր, դեպուտատ Վ. Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ, կուսակցության Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար, դեպուտատ Է. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ, հանրապետության շինարարության մինիստրության № 9 տրեստի կառավարիչ, դեպուտատ Ռ. Գ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ, գեներալ-լեյտենանտ Վ. Ս. ԿՐԱԵՎԸ, կուսակցության Շուշվա շրջկոմի առաջին քարտուղար, դեպուտատ Ն. Ա. ՀԱՋԻԵՎԸ, մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ, ԼՂԻՄ ագրոարդի նախագահ, դեպուտատ Վ. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, Բաքվի 26 կոմիսարների անվան Ղարմետաքսկոմբինատի դիրեկտոր, դեպուտատ Ռ. Ե. ԱԹԱՅԱՆԸ, մարզգործկոմի կուլտուրայի վարչության պետ, դեպուտատ Լ. Հ. ՂԱՋԻՅԱՆԸ, «Ավտոմոտոլյուբիտել» մարզային կամավոր ընկերության նախագահ Ա. Ա. ՂԱԶԱՐՅԱՆԸ, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Զ. Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆԸ, հանրապետության գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար, դեպուտատ Վ. Ս. ՀԱԿՈԲՅԱՆԸ:

Նստաշրջանում ելույթ ունեցան կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆԸ և Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ս. Բ. ԹԱԹԼԻԵՎԸ:

Քննարկված հարցի առթիվ ընդունվեց համապատասխան որոշում:

Նստաշրջանի աշխատանքին մասնակցեց ՍՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Լ. Դ. ՇԻՇՈՎԸ: